

ՄԱՏԵՄԱՏԻԿԱ 6-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼ 2022-2023
Տևողությունը 2 ժամ 30 րոպե

1. Գրատախտակին մեկ շարքով գրված են մի քանի հաջորդական բնական թվեր: Այդ թվերի ճիշտ 48%-ը կենտ են: Քանի՞ զույգ թիվ է գրված գրատախտակին:

2. Դասարանում սովորում է 30 աշակերտ, ովքեր պայմանավորվում են խաղալ հետևյալ խաղը՝ նրանց մի մասը պետք է միայն ճիշտ խոսի, իսկ մյուս մասը՝ միայն սուտ: Մտնելով դասարան և նստելով նստարաններին զույգերով՝ նրանցից յուրաքանչյուրն ասաց. «Կողքիս նստածը ստախոս է»: Այնուհետև նրանցից մի քանիսը տեղափոխվեցին նստատեղերով: Դրանից հետո հնարավո՞ր է արդյոք նրանցից յուրաքանչյուրը ասի. «Կողքիս նստածը ճշտախոս է»:

3. Քանի՞ բնական թվազույգ գոյություն ունի, որոնց ամենափոքր ընդհանուր բազմապատիկը 2023-ն է (a և b բաժանարարների համար (a;b) և (b;a) թվազույգերը համարել նույնը):

4. Հարյուր թվանշան ունեցող բնական թվի հետ կատարում են հետևյալ գործողությունները. սկզբում զույգ առ զույգ գումարում են նրա բոլոր թվանշանները, այնուհետև ստացված բոլոր արդյունքները բազմապատկում (օր.՝ 123 եռանիշ թվի համար կստացվի $1+2=3$; $2+3=5$; $1+3=4$: Այնուհետև $3\cdot 5\cdot 4=60$): Հնարավո՞ր է արդյունքում ստացվի սկզբնական հարյուրանիշ թիվը:

(ԲՈՒՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆԱՎՈՐԵԼ)